## <u>Դպրոցները բացելու կոմիտե</u>

Հունիսի 16, 2020 կեսօրից հետո ժամը 4:00, Զում ծրագրի միջոցով

**Ներկաները.** Սերա Նիման, Մաթ Հիլ, Ջոն Պարամո, Շերոն Քուսեռ, Փիտր Քնապիկ, Դեբբի Քատկա, Սալլի Չյու, Տամի Շերն, Լուիս Այալա, Մարթա Ուոլտերս, Թոնի Ֆրանկո, Քելլի Դանկլ, Շարլին Ուոլտերս, Դագ Գուտիերես, Էմիլիո Յուրիոստե, Դեբբի ՄքՀորնի, Լենորա Ագիլերա, Լոռի Լիթլ, Չառ Թաբեթ, Ռիկ Վոնկ, Գրեգ Միլլեր, Ռոբին Անդերս, Ռեբեկա Միլաուսկի, Քյաթի Սեսինգհաուս, Շերի Բրկիարթ, Լարրի Քրոս, Կայլի ՄքԴանալդ, Ստեյսի Քաշման, Ստեֆանի Ֆիլդ, Վենդի Հարվել, Թոմ Քրաուտեր, Ջեն Գոլդենբերգ, Սյուզի, Սթիվ Ֆեգասոն

**Մաթ –**

- Լոս Անջելեսի գավառի առողջապահության զրասենյակ – մշակել է նոր կանոնազրեր, շատ փոփոխություններ չեն սպասվում,
- Նահանգը խոսում է դպրոցների բացման վերաբերյալ- ցանկանում է, որ դպրոցները քչով բավարարվելով անեն շատ գործ,
- Ընդգծել ենթախմբերի աշխատած թեմաների կարևոր կետերը

**Ջոն Պարամո – Սոցիալ և հուզական**

- Այս շաբաթ, ուշադրությունը տարրական դպրոցների վրա է: Մեզ միացավ Ջեննիֆեր Քեյջը:
- Լրացուցիչ ժողովներ FSA-ի հետ, թե ինչպես լավացնեն տարրական դպրոցի ծառայությունները
- Մտածում ենք օգտվել սոցիալ հուզական կրթական ծրագրից, որը կարևոր է հանդիսանում համաճարակից պատճառով
    - Ջ. Քեյջը ցանկանում է օգտվել «Երկրորդ քայլ» ծրագրից

**Հարց. Թոնի Ֆրանկոն հարց ունի դասաժամի տևողության վերաբերյալ**

- Մաթ – դեռ ոչինչ չի հաղորդվել նահանգի կողմից, բայց հուսով ենք ճկունություն կցուցաբերվի

Շերոն Քուսեռ – Դասավանդում

- Աշակերտները մասնակցեցին դասավանդման ենթակոմիտեի ժողովին
    - Աշակերտները ցանկանում են ետ վերադառնալ և տեսնել իրենց ընկերներին
    - Համաձայն են հիբրիդ մոդելի հետ և չեն ուզում 100% հեռակա ուսուցում
    - Մարզիկները ցանկանում են դպրոց հաճախել կեսօրից հետո, որ անմիջապես հետո զբաղվեն սպորտով
    - Անմիջական շփում է հարկավոր ուսուցիչների և աշակերտների միջև
- Դեբբի ՄքՀորնի – ասաց, որ մենք չպետք է մոռանանք, որ աշակերտները և ուսուցիչները նոր միջավայր են մտնում, համաճարկը դեռ չի վերջացել, ուսուցման տարբեր մոդելներ և բոլորս գտնվում ենք բարձր գերլարվածության տակ
- Նշումներ, որոնք վերաբերվում են ուսուցման մոդելներին և դասացուցակներին, որոնք գտնվում են գուգլի մեջ:

● Աշխատում ենք Թամի Շերնի հետ Հատուկ ուսուցման աշակերտների կարիքների և դրանք հոգալու վերաբերյալ:
- Հարցեր.
  - Վենդի – բաժանվելու են արդյո՞ք ուսուցիչները անձամբ դասավանդողների և հեռակա ուսուցման դասավանդողների:
  - Շերոն – ուսուցիչները կկիսեն աշխատանքը՝ մեկը կդասավանդի անձամբ, իսկ մյուսը՝ հեռակա ուսուցմամբ:
  - Քելլի – հարց այն աշակերտների մասին, ովքեր համացանցից չեն օգտվում:
  - Վենդի – Ծնողներին մտահոգում է այն, որ այս տարվա հեռակա ուսուցումը կնմանվի անցյալ կիսամյակին և դրա համար այն նրանց չի հետաքրքրում:

**Փիթր Քնապիկ - Ընտանիք/համայնք**

- Ծնողներին ուղարկված հարցաթերթիկ ԱՄ-5-րդ և 6-12-րդ դասարաններ: Հարցերը ներառնում են.
  - Ո՞վ է ցանկանում անել միայն հեռակա ուսուցում:
    - Ուղղակի տարրական դպրոցի համար, APEX՝ միջանկյալի:
  - Ու՞մ է հարկավոր երեխաների խնամք:
  - Ո՞վ կարող է տնից աշխատել:
  - Սոցիալ հուզական կրթություն և շփում համաճարակի ընթացքում
- Հաղորդակցման ժամանակացույց
  - Սկզբից առողջություն և անվտանգություն, հետո՝ ուսումնական ծրագիր/դասավանդում, կազմակերպել դպրոցում լինելու իրավիճակը
  - 1-ին հաղորդագրությունը պետք է լինի մինչև հուլիսի 1-ը
    - Գրեգն առաջարկում է անել ավելի շուտ
  - Լոռի Լիթլն առաջարկեց հասարակական մամուլի/տեսաժապավեններ կցել Մաթի ուղարկած էլեկտրոնային փոստի նամակներին
- Հարցեր
  - Երեխաների խնամք – բոլոր կենտրոնները սկսում են բացվել: Հաճախողների թիվը ցածր է:
  - Դպրոցները փակելու հիմքը ո՞րն է: Հիմնված է հանրային առողջապահության գրասենյակի առաջարկների վրա: Լենորան ասաց, որ Լոս Անջելեսի գավառի կրթական գրասենյակը փորձում է առողջապահական գրասենյակին հայտնել մանրամասների մասին:
    - Եթե վարակի հաստատված դեպք լինի, դպրոցը ապացույց կպահանջի, որպեսզի իմանա ինչ քայլերի դիմել:
  - Քելլի – Լուրերը տարածել «Լիդեր» թերթի միջոցով:
  - Քելլի – Եթե աշակերտները դպրոցում չեն, ապա ուսուցչի օգնականները դպրոցում պետք է՞ լինեն:
    - Շերոն – աշակերտները կշարունակեն աշխատել, իսկ ուսուցչի օգնականները կաջակցեն նրանց:
  - Դագ – իսկ աշակերտների ջերմությու՞նը
    - Մաթ – Նախանգն առաջարկում է, որ ծնողները չափեն երեխաների ջերմությունը կամ էլ դպրոցը կչափի կասկածի պարագային: Ջերմություն

չափող սարքեր կտեղադրվը մուտքի մոտ, եթե դրամ հատկացվի ($2000+ յուրաքանչյուր մուտքի մոտ, շատ թանկ)
- Դեբբի Ք. – երեխաների շատ լինելու պատճառով հնարավոր չի լինի չափել բոլորի ջերմությունը

**Դեբբի Ք. –**

- Շինություններ
  - Փափուկ կահույք – ցանկանում ենք հանել դպրոցներից
  - Փչող ախտահանիչներ – փչել, թողնել մնա 2 րոպե, հետո սրբել
    - Հուսով ենք, որ պայուսակները կախելու հարմարամք կունենանք
  - Ցանկանում ենք միավորել անձնական օգտագործման իրերի ձեռքբերումը FEMA-ի միջոցով և ստանալ զեղչված գնով
- Սննդի ծառայություններ
  - Փաստաթղթերը զուգլում են
  - Կայունություն
- Տեխնոլոգիա
  - Մաքրող սարքեր
  - Կարող ե՞ն ուսուցիչները հեռարձակել: Միգուցե փաստաթղթերի տեսախցիկի օգնությամբ:
  - Էլեկտրոնային փոստի հասցե յուրաքանչյուր աշակերտի համար – համոզվել, որ աշակերտներն օգտվում են դրանից
  - Ավելի շատ կարելի է օգտվել Բլակբորդ ծրագրից
- Առողջություն և անվտանգություն
  - Հաշի առնել բոլոր մակերևույթները
  - Ինչպե՞ս մեկուսացնել ախտանշաններ ունեցող աշակերտներին:
  - Թափանցիկ միջնորմներ տեղադրել ամենաբանուկ վայրերում
  - Տղաների և աղջիկների ակումբ – շինություններից օգտվելը – օրվա վերջում պետք է մաքրեն և ինչպես պետք է այն կատարեն

Հարց -ուսուցչի օգնականներէ օգնեն ուրբաթ օրերին

Շերոն – նրանք կարող են փոքր խմբով, հեռակա կարգով օգնել օգնության կարիք ունեցող աշակերտներին

Հարցեր - Շարլին

- Թափանցիկ միջնորմները կարծես թե աշխարհի շուրջ օգտագործվում են ամենաշատն ուսուցիչների համար
- Դեբբի – Հաստատում է, որ կան տարբեր կարծիքներ: ԲԴՄՇ-ն կարծում է, որ գործնական կլինի երեսի թափանցիկ վահաններ տալ ուսուցիչներին:

Սթիվ Ֆերգսոն

Զգուշացեք ջերմությունը շոգ օրերին չափելուց, քանի որ շատերի մոտ բարձր կլինի

Ռիկ Վ.

Քովիդ հիվանդության քննություն կատարելու տեղ կլինի՞ դպրոցներում:

Լենորա – խոսվել է այդ մասին, բայց դեռ ոչինչ հաստատ չէ:

Լենորան բացատրեց, որ հանրային առողջապահության գրասենյակն աշխատում է դպրոցի բուժքույրերի հետ, թե ինչպես վարվել և զեկուցել դպրոցում եղած հիվանդության դեպքերը: Մենք սպասում ենք հրահանգների: